ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Բուժքույրերի միջազգային օրվա առթիվ

12.05.2021

Սիրելի բուժքույրեր, ի սրտե և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի առթիվ:
Նախ ցանկանում եմ երախտիքի խոսք հղել Ձեզ և ոլորտի այն բոլոր աշխատակիցներին, ովքեր բարձր պատասխանատվությամբ և անմնացորդ նվիրումով գիշերուզօր պայքարում են համաշխարհային այս մարտահրավերի՝ COVID-19-ի դեմ: Ինչ խոսք, այս անհավասար պայքարում ձեզ հաջողվում է մեծաթիվ կյանքեր փրկել, իսկ երբեմն էլ, ուղղակի, անզոր գտնվել այդ համամարդկային չարիքին դիմագրավելու հարցում:

Հավատացած եղեք, որ այն հոգատարությունն ու սերը, որը դրսևորվում է բուժհաստատությունում սպիտակ խալաթ կրող յուրաքանչյուր անձի կողմից, միշտ փոխադարձվում է ամենաանկեղծ ու մարդկային վերաբերմունքով: Եվ ավելի մեծ ու իրական գնահատանք բժշկի համար կարծում եմ՝ գոյություն չունի:

Հարգարժան բուժքույրեր, ևս մեկ անգամ շնորհավորելով Ձեզ մասնագիտական օրվա առթիվ՝ ցանկանում եմ ամուր կամք և անձնական երջանկություն: Եվ թող ձեր նվիրական աշխատանքը միշտ հաջողությամբ պսակվի:
Ամենայն բարիք ձեզ և ձեր ընտանիքներին: